14.10.2014թ.

8/4037

«Համագործակցություն հանուն ժողովրդավարության»
կենտրոնի նախագահ, պարոն
Ստեփան Դանիելյանին

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ԿԱ ԱԱԾ տնօրենին ուղղված Ձեր դիմումի հիման վրա ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում նյութերի նախապատրաստման շրջանակներում ստուգվել են դիմումում մատնանշված փաստերն ու հանգամանքները, որի արդյունքում պարզվել է, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայորդաց տների տեսուչ-տնօրեն Կոմիտաս վարդապետ Հովնանյանի գործողություններում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ, ուստի 16.09.2014թ. որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Վարչության պետի տեղակալ, գնդապետ Ա. Աղաջանյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

քրեական գործի հարուցումը մերժելու մասին

« 16 » սեպտեմբերի 2014թ ք. Երևան

ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչության պետի տեղակալ, գնդապետ Ա. Աղաջանյանս, վերանայելով ՀՀ ԿԱ ԱԱԾ սահմանադրական կարգի պահպանության և ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչությունից ստացված նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2014թ. սեպտեմբերի 5-ին ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում ստացվել են՝ ՀՀ ԿԱ ԱԱԾ ՍԿՊ և ԱՊ գլխավոր վարչությունից ուղարկված՝ «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ նախագահ Ստեփան Դանիելյանի՝ ՀՀ ԱԱԾ տնօրենին 17.02.2014թ. հասցեագրված նամակի կապակցությամբ նախապատրաստված նյութերը:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ նախագահ Ստեփան Դանիելյանը, 17.02.2014թ. նամակ է հասցեագրել ՀՀ ԱԱԾ տնօրենին, որում հայտնելով, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայորդաց տների տեսուչ-տնօրեն Կոմիտաս վարդապետ Հովնանյանի կողմից 09.09.2013թ. «Նոյան Տապան» ակումբում կազմակերպված ասուլիսի ժամանակ՝ վերջինս հրապարակավ հայտարարել է, որ Հայաստանի Հանրապետությունում գործում են շուրջ 220 կրոնական կազմակերպություններ, որոնք արտասահմանից տարեկան ստանում են մոտավորապես կես միլիարդ դոլարի ֆինանսավորում և որոնց նպատակը պետության քայքայումն ու կազմալուծումն է, խնդրել է ստուգել վերոհիշյալ հրապարակված տվյալների իսկությունը և դրանք չհաստատվելու դեպքում իրավական գնահատական տալ Կոմիտաս վարդապետ Հովնանյանի գործողություններին, հիշատակելով ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածը:

Մասնավորապես՝ Ստեփան Դանիելյանն իր նամակում նշել է՝ «Վերջերս մի շարք լրատվամիջոցներ տպագրել էին 09.09.2013թ. «Նոյան Տապան» ակումբում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայորդաց տների տեսուչ-տնօրեն Կոմիտաս վարդապետ Հովնանյանի կողմից կազմակերպված ասուլիսի մանրամասները: Լրատվամիջոցների կողմից կատարված հրապարակումներից պարզվում է, որ մամուլի ասուլիսի ժամանակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայորդաց տների տեսուչ-տնօրեն Կոմիտաս վարդապետ Հովնանյանը մամլո ասուլիսի ժամանակ հրապարակավ հայտարարել է, որ Հայաստանի Հանրապետությունում գործում են շուրջ 220 կրոնական կազմակերպություններ, որոնք արտասահմանից տարեկան ստանում են մոտավորապես կես միլիարդ դոլարի ֆինանսավորում և որոնց նպատակը պետության քայքայումն ու կազմալուծումն է: Ըստ Կոմիտաս վարդապետ Հովնանյանի, անկախությունից հետո տարաբնույթ աղանդավորական շարժումներ են հայտնվել Հայաստանում և օգտվելով հայ ժողովրդի ծանր տնտեսական, սոցիալական և քաղաքական իրավիճակից, փորձում են «փրկչի» կերպարի մեջ մտնելով, պառակտել հայ ժողովրդին:

Կոմիտաս վարդապետ Հովնանյանի պնդմամբ՝ Հայաստան է ներմուծվել նաև «Քրիստոնեական միջազգային ընտանիք» անվամբ աղանդ, որի քարոզչության հիմնական ուղղությունը քրիստոնեության անվան տակ միասեռականության, արյունապղծության քարոզումն է, այսինքն, երբ քարոզվում են այդ սրբապղծությունները՝ մոր հարաբերությունը տղայի հետ, հոր հարաբերությունը աղջկա հետ, քրոջ հարաբերությունը եղբոր հետ, նաև քարոզվում է մանկապղծություն (պեդոֆիլիա), խրախուսվում է նաև ինքնասպանությունը:

Փաստորեն, լրատվական գործակալությունների միջոցով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայորդաց տների տեսուչ-տնօրեն Կոմիտաս վարդապետ Հովնանյանը հրապարակել է փաստեր, որոնք պատկան մարմինների քննության առարկա պիտի դարձված լինեն, մասնավորապես՝ Կոմիտաս վարդապետ Հովնանյանի կողմից

հրապարակված փաստերն արժանահավատ լինելու դեպքում առկա է պետական անվտանգությանն ուղղված լուրջ սպառնալիքներ (դրսից եկող ֆինանսավորմամբ պետության հիմքերի թուլացում և քայքայում), իսկ փաստերը ոչ արժանահավատ լինելու դեպքում՝ կարող է ի հայտ գալ ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները: Հարկ է նշել նաև, որ լրատվական գործակալությունների միջոցով Կոմիտաս վարդապետ Հովնանյանի կողմից իրականացված հրապարակումից անմիջապես հետո Երևանի Ավետարանչական եկեղեցու հոգևոր հովիվ Լևոն Պարտակյանի նկատմամբ իրականացվել է բռնություն, անհայտ անձ փորձել է դանակահարել վերջինիս:

Ինչևէ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի համաձայն քրեական գործ հարուցելու առիթ է հանդիսանում նաև հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները, ուստի ակնկալվում է, որ վերոնշյալ փաստերի մասին հրապարակումները ՀՀ Ազգային անվտանգության ծառայության կողմից անհետևանք չեն թողնվել և այդ փաստերի մասով իրականացվում է քննություն:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածներով, խնդրում եմ հայտնել.

1. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայրդաց տների տեսուչ-տնօրեն Կոմիտաս վարդապետ Հովնանյանի կողմից 09.09.2013թ. «Նոյան Տապան» ակումբում իրականացված հրապարակումների փաստով ՀՀ Ազգային անվտանգության ծառայության կողմից քննություն իրականացվո՞ւմ է, թե՞ ոչ: Եթե այո, ապա խնդրում ենք հայտնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայրդաց տների տեսուչ-տնօրեն Կոմիտաս վարդապետ Հովնանյանի կողմից հրապարակված փաստերի իսկությունը հաստատվե՞լ է գործի քննությամբ, թե՝ ոչ: Եթե ոչ, ապա Կոմիտաս վարդապետ Հովնանյանի արարքում արդյոք առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները, թե՝ ոչ:

2. Եթե գործի քննությամբ պարզվել է հրապարակված փաստերի իսկությունը, ապա խնդրում ենք հայտնել, թե որ կրոնական կազմակերպություններն են արտասահմանից ստանում տարեկան կես միլիարդ դոլարի ֆինանսավորում և պետության քայքայմանն ուղղված ինչ գործողություններ են կատարվել և ՀՀ-ում իրականում որքան կրոնական կազմակերպություններ են գործում»:

Նախապատրաստված նյութերով պարզվել է նաև, որ վերոհիշյալ ասուլիսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայրդաց տների տեսուչ-տնօրեն Կոմիտաս վարդապետ Հովնանյանն իրականացրել է Սևակ Հովհաննիսյանի հետ:

Մամլո ասուլիսում հրապարակված փաստերի պարզաբանման նպատակով՝ բացատրություններ են վերցվել Կիրակոս Կարապետի Հովնանյանից (նույն ինքը՝ Կոմիտաս վարդապետ Հովնանյան) և ասուլիսին մասնակցած՝ «Միացյալ երիտասարդական լիգա» ՀԿ համանախագահ Սևակ Անուշավանի Հովհաննիսյանից:

Կ. Հովնանյանը բացատրությունում նշել է, որ «Քրիստոնեական միջազգային ընտանիք» աղանդի առաջնորդ՝ Դեյվիդ Բերգի, ինչպես նաև այլ աղանդների վերաբերյալ տեղեկությունները ստացել է համացանցի կայքէջերից: Մասնավորապես, տեղեկացվել է, որ նշված աղանդը քարոզում է մանկապղծություն, արյունապղծություն, համասեռամոլություն: «Քրիստոնեական միջազգային ընտանիք» աղանդի Հայաստան ներթափանցելու մասին իմացել է «Միացյալ երիտասարդական լիգա» հասարակական կազմակերպության համանախագահ Սևակ Հովհաննիսյանից, ով հայտնել է իրեն, որ Երևանի սրճարաններից մեկում պատահաբար հանդիպել է կողքի սեղանին նստած մի խումբ երիտասարդների, ովքեր զրուցել են «Քրիստոնեական ընտանիք» աղանդի մասին, որի ժամանակ մոտեցել է նրանց և հետաքրքրվել այդ աղանդի ՀՀ-ում ծավալած գործունեության մասին: Երիտասարդները, որոնցից մի քանիսն եղել են ազգությամբ ուկրաինացի և ներկայանալով որպես աղանդի անդամներ, հայտնել են, որ աղանդն ունի հետևորդներ Երևանում և Արտաշատում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ

«Քրիստոնեական ընտանիք» աղանդն ապաբարոյականությունից բացի, ընտանեական քայքայում և այլասեռում է քարոզում, որպես ՀՀ քաղաքացի և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու սպասավոր, իր մտահոգություններն որոշել է ներկայացնել հասարակությանը, զգուշացնելու, տեղեկացնելու և լուսաբանելու նպատակով, ինչն իրականացրել է Սևակ Հովհաննիսյանի հետ միասին:

Նույն լրատվական հրապարակումներից և համացանցում զետեղված տվյալներից տեղեկացել է, որ ՀՀ-ում գործում են 210-ից ավելի կրոնական շարժումներ, որոնց կողմից տարեկան կտրվածքով իրականացվում են տարաբնույթ հավաքներ, շինարարություններ, հրատարակչական աշխատանքներ, քարոզչության, բարեգործության, տարածքների վարձակալության գործարքներ, որոնց վրա, ըստ վերոհիշյալ տեղեկատվական աղբյուրների, ծախսվում է տարեկան շուրջ 2,0 մլն ԱՄՆ դոլարի չափով գումար, որը բազմապատկելով կրոնական կազմակերպությունների թվին, ստացել է մոտավոր այն ընդհանուր թիվը, որը նշել է ասուլիսի ժամանակ: Ներկայացված եզրահանգումները հանդիսացել են զուտ իր անձնական հաշվարկների և վերլուծությունների արդյունքներ, որոնք հնարավոր է նաև չհամապատասխանեն իրականությանը: Ուղղակի, իր համար անընդունելի է որևէ գաղափարախոսություն, որն ուղղված է ընտանիքի, ազգային արժեքների, ՀՀ անկախության և պետականության քայքայմանը, ինչը գնահատում է որպես հակապետական գործունեություն, զերծ մնալով իրավական գնահատականներից:

Բացի այդ, նշելով աղանդավորական կրոնական կազմակերպությունների մասին, դրանցից առանձնացրել է՝ Հայ Առաքելական, Կաթոլիկ, Օրթոդոքս, Ուղղափառ և Ավետարանչական եկեղեցիները, համարելով դրանք որպես ավանդական եկեղեցիներ, և կրոնա-աղանդավորական կազմակերպությունների վերաբերյալ իր հայտարարություններն ու գնահատականներն որևէ կերպ չեն կարող անդրադառնալ Հայ Ավետարանչական եկեղեցուն և մասնավորապես՝ նրա մաս կազմող Երևանի Ավետարանչական եկեղեցուն, ուստի որևէ կապ իր հրապարակումների և Երևանի Ավետարանչական եկեղեցու հովիվ Լևոն Պարտակյանի դեպքի միջև չի տեսնում:

Մամլո ասուլիսի ժամանակ իր կողմից հնչեցրած տեսակետներում և կարծիքներում՝ Հայաստանում գործող կրոնա-աղանդավորական որևէ կոնկրետ կազմակերպության նկատմամբ թշնամանք, ատելություն կամ արժանապատվության նվաստացում սերմանելու միտում չի ունեցել, իր հայտարարությունները՝ քրիստոնեության քողի ներքո գործող զանազան շարժումներից և հոսանքներից հասարակությանը զերծ պահելու, զգուշացնելու և տեղեկացնելու բնույթ են կրել:

«Միացյալ երիտասարդական լիգա» հասարակական կազմակերպության համանախագահ՝ Սևակ Անուշավանի Հովհաննիսյանը բացատրություն է տվել այն մասին, որ 2013 թվականի օգոստոսի ընթացքում Երևանի Հանրապետության Հրապարակին հարող սրճարաններից մեկում պատահաբար լսել է հարևան սեղանի շուրջ նստած 7-8 երիտասարդների խոսակցությունը, որի թեման եղել է «Քրիստոնեական միջազգային ընտանիք» կրոնա-աղանդավորական կազմակերպությունը, որի մասին մինչ այդ չի լսել, ուստի որոշել է մոտենալ երիտասարդներին և հետաքրքրվել այդ աղանդի մասին: Կարճատև խոսակցության ընթացքում պարզել է, որ դրանցից երեքը՝ ազգությամբ ուկրաինացի են, որոնցից Տատյանա անունով մոտ 30 տարեկան կինը համառոտ տեղեկացրել է, որ նշված աղանդի անդամներ են, ցանկություն ունեն աղանդի մասնաճյուղը հիմնել Հայաստանում և հենց այդ նպատակով էլ ժամանել են Երևան: Կազմակերպության ղեկավարի, անդամների և հնարավոր հավաքատեղիների վերաբերյալ տեղեկություններ ստանալու իր փորձերն ապարդյուն են եղել, քանի որ Տատյանան հրաժարվել է պատասխանել այդ հարցերին, փոխարենը՝ վերցրել է իր բջջային հեռախոսահամարը և խոստացել է զանգահարել, սակայն դրանից հետո որևէ զանգ չի եղել: Այդ հանդիպումից հետո համացանցում որոնել և որոշ տեղեկատվություն է գտել աղանդի և դրա հիմնադիր՝ Դեյվիդ Բերգի և նրա հետևորդների վերաբերյալ, ըստ որի՝ վերջիններս քարոզում են մանկապղծություն, incեստ և համասեռամոլություն: Նշված աղանդի գործունեության և քարոզչության վերաբերյալ պատմել է իր վաղեմի ծանոթ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայորդաց տների տեսուչ-տնօրեն Կոմիտաս վարդապետ

Հովնանյանին և տեղեկատվություն տարածել «ֆեյսբուքյան» իր կայքէջում, որից հետո իր հետ կապվել է «Նոյան Տապան» գործակալության աշխատակիցը և հրավիրել ասուլիսի, որին մասնակցելու առաջարկ է կատարել նաև Կոմիտաս վարդապետին, ով նույնպես մտահոգված լինելով այդ երևույթներով և համացանցի միջոցով անհրաժեշտ տեղեկատվություն ստանալով աղանդի մասին, համաձայնեց մասնակցել և առկա մտահոգություններով կիսվել հասարակության հետ:

Թե վերոհիշյալ ասուլիսի ընթացքում Կոմիտաս վարդապետ Հովնանյանի հնչեցրած հայտարարությունները կարո՞ղ են արդյոք հարուցել կրոնական, ազգային կամ ռասայական թշնամանք, ինչպես նաև վերը նշված հայտարարություններն ուղղվա՞ծ են արդյոք ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվության նվաստացմանը, հարցերը պարզաբանելու նպատակով՝ նյութերով նշանակվել և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ փորձագետների կողմից կատարվել է դատահոգեբանալինգվիստիկական համալիր փորձաքննություն, որի 29.07.2014թ. թիվ 14-1231 եզրակացության համաձայն՝

«...Ակնհայտ է դառնում, որ մամլո ասուլիսի նպատակը տեղեկատվական է՝ ներկայացնել «Քրիստոնեական միջազգային ընտանիք» աղանդը, որն ունի տարբեր անվանումներ՝ «Աստծո երեխաներ», «Ընտանիք» և այլն: Կոմիտաս վարդապետ Հովնանյանը համառոտ ներկայացնում է աղանդի հիմնական ուղղության, քարոզչության բովանդակությունը՝ նշելով, որ քրիստոնեության անվան տակ պրոպագանդվում է ինցեստը, միասեռականությունը: Այնուհետև Կոմիտաս վարդապետ Հովնանյանը և Ս. Հովհաննիսյանը պատասխանում են լրագրողների հարցերին: Հարցերին պատասխանելիս օրինակների ձևով անդրադարձ է կատարվում նաև այլ աղանդների գործունեությանը և նշվում է, որ այդ տեղեկատվության նպատակն է հասարակությանը զգուշացնել զերծ մնալու ոչ քրիստոնեական քարոզներից: Կոմիտաս վարդապետ Հովնանյանն անդրադառնում է նաև այսօր Հայաստանում գործող կրոնական, աղանդավորական կազմակերպությունների քանակին, նշում է, որ դրանց թիվը հասնում է երկու հարյուր քսանի, դրանցից առանձնացնում է Հայ Առաքելական Եկեղեցին, Կաթոլիկ, Օրթոդոքս, Ուղղափառ և Հայ Ավետարանչական եկեղեցիները, մնացածին նշելով որպես աղանդավորական շարժումներ:

... Անդրադառնալով մամլո ասուլիսի բովանդակությանը՝ պիտի նշել, որ այն առավելապես տեղեկատվական բնույթ ունի: Փորձաքննության ներկայացված նյութերի և համացանցի որոշակի կայքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն տեղեկությունները, որոնք հրապարակվում են մամլո ասուլիսի ժամանակ առկա են նաև նշված կայքերում և ներկայացված նյութի մեջ: «Քրիստոնեական միջազգային ընտանիք» և այլ աղանդների վերաբերյալ տեղեկատվությունը և դրանց սկզբունքների վերլուծությունը մամլո ասուլիսի ժամանակ կատարվում է Հայ Առաքելական Եկեղեցու և ազգային սկզբունքների տեսանկյունից: Ինչը հաշվի է առնվել վերը նշված վերլուծության ընթացքում: Հարկ է նշել նաև, որ ըստ տեսաձայնագրության վերլուծության՝ Կոմիտաս վարդապետ Հովնանյանը խոսում է ոգևորված տոնով, ընդգծելով իր մտահոգությունը այնպիսի իրողությունների տարածման վերաբերյալ, որոնք հարիր չեն հայ ազգային, կրոնական արժեքներին, առավելապես նշվում է, որ «կարևորը երևույթի բացահայտումն է», ինչը ևս փաստում է, որ մամլո ասուլիսն իր բովանդակությամբ տեղեկատվական է, զգուշացնող, հասցեատերը հասարակությունն է, իսկ հարցով մտահոգվածությունը արտահայտվում է նաև խոսքի հնչերանգում:

Մամլո ասուլիսի ընթացքում նշված հայտարարությունների ընդհանուր բովանդակության լեզվաոճական, լեզվաբանահոգեբանական վերլուծությունից ելնելով՝ պիտի փաստել, որ դրանցում առկա չեն այնպիսի բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, որոնք կհարուցեն կրոնական, ազգային կամ ռասայական թշնամանք, ինչպես նաև ուղղված չեն որևէ ազգի արժանապատվության նվաստացմանը կամ ռասայական գերազանցությանը»:

Նախապատրաստված նյութերում առկա տվյալների, Կ. Հովնանյանից և Ս. Հովհաննիսյանից ստացված բացատրությունների, մամլո ասուլիսի ընթացքում արված

հայտարարությունների և փորձագետի եզրակացության վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ նշված ասուլիսի ժամանակ Կոմիտաս վարդապետ Հովնանյանի կողմից հնչեցրած հայտարարություններն ունեցել են «Քրիստոնեական միջազգային ընտանիք» աղանդի գոյության և վերջինիս կողմից մանկապղծություն, արյունապղծություն և միասեռամոլություն քարոզելու վերաբերյալ տեղեկատվական բնույթ, ինչպես նաև՝ հանդիսացել են հայ ժողովրդի ազգային և կրոնական արժեքների քայքայմանն ուղղված աղանդների գործունեությամբ և այդ արժեքների պահպանությամբ մտահոգված՝ Հայ Առաքելական եկեղեցու սպասավորի, ՀՀ քաղաքացու կողմից՝ քրիստոնեական քողի ներքո իրականացվող անբարոյական քարոզներից զերծ մնալու համար հասարակությանը զգուշացնելու և մտահոգությամբ կիսվելու փորձ:

Ինչ վերաբերում է Ստեփան Դանիելյանի կողմից նամակում մատնանշված՝ լրատվական գործակալությունների միջոցով Կոմիտաս վարդապետ Հովնանյանի կողմից իրականացված հրապարակումից անմիջապես հետո Երևանի Ավետարանչական եկեղեցու հոգևոր հովիվ Լևոն Պարտակյանի նկատմամբ իրականացված բռնության հանգամանքին, ապա վերոհիշյալ հայտարարություններում Կոմիտաս վարդապետ Հովնանյանը, անդրադառնալով Հայաստանում գործող կրոնական կազմակերպություններին, դրանցից առանձնացրել է՝ Հայ Առաքելական եկեղեցին, Կաթոլիկ, Օրթոդոքս, Ուղղափառ և Հայ Ավետարանչական եկեղեցիները, որպես ավանդական եկեղեցիներ, մնացածին համարելով աղանդավորական շարժումներ, ուստի նշված փաստից կարելի է հետևություն անել, որ որևէ պատճառական կամ հետևանքային կապ՝ վերոհիշյալ հրապարակումների և Երևանի Ավետարանչական եկեղեցու հոգևոր հովիվ Լևոն Պարտակյանի նկատմամբ իրականացված բռնության միջև չի կարող լինել:

Այսպիսով, Կիրակոս Կարապետի Հովնանյանի (Կոմիտաս վարդապետ Հովնանյանի) արարքում բացակայում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Կիրակոս Կարապետի Հովնանյանի վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով, նախատեսված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, որի մասին հայտնել նրան:

2. Որոշման օրինակն ուղարկել քննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին:

ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչության
պետի տեղակալ, գնդապետ Ա. Աղաջանյան